«Առկա» լրատվական գործակալություն, 20.05.2015
http://arka.am/am/news/economy/hayastanum_brendavorman_hamakargy_patshaj_makardakum_che_/

Հայաստանում բրենդավորման համակարգը դեռևս պատշաճ մակարդակում չէ. փորձագետ

ԵՐԵՎԱՆ, 20 մայիսի. /ԱՌԿԱ/. Հայաստանում բրենդավորման համակարգը դեռևս պատշաճ մակարդակում չէ, չորեքշաբթի լրագրողներին ասաց ՀՀ էկոնոմիկայի նախարարության Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի տնօրեն Գևորգ Վարդանյանը:

«Հայաստանում բրենդավորումը դեռևս պատշաճ մակարդակում չէ, քանի որ տեղեկատվության պակասի հետ կապված խնդիրներ կան, սակայն վերջերս այս ուղղությամբ մեծածավալ աշխատանք է իրականացվում, մասնավորապես նման աշխատանք է իրականացնում Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը, որը ձեռներեցներին տրամադրում է խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ», – նշեց Վարդանյանը «Բրենդի օր–2015» բիզնես կոնֆերանսի շրջանակում:

Բիզնես–կոնֆերանսը կազմակերպել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը՝ «Արմբրենդ» ազգային գործընկերային համակարգի հետ համատեղ: Միջոցառման ընթացքում կքննարկվեն հայկական բրենդի զարգացման խնդիրներն ու նրանց հնարավոր լուծումները: Կոնֆերանսին մասնակցել են տեղական և միջազգային ապրանքներ (ծառայություններ) արտադրողներ, գովազդային ընկերությունների ղեկավարներ, մարկետոլոգներ և պետական կառույցների ներկայացուցիչներ:

Վարդանյանի խոսքով՝ արտաքին շուկա դուրս գալու ցանկություն ունեցող ձեռներեցներն ու ընկերությունները խոշոր գումարներ են ծախսում և մասնագետների վարձում՝ բրենդինգի ողջ գործընթացն իրականացնելու համար, և պետության դերն այն է, որ հնարավորին չափ աջակցի նրանց այս հարցում:

«Պետությունը պետք է աջակցի սկսնակ ձեռներեցներին, մասնավորապես՝ մտավոր սեփականության պահպանման գործընթացում, և օգնի նրանց այդ ողջ գործընթացի ընթացքում», – նշեց Վարդանյանը։

Նա հույս հայտնեց, որ «Բրենդի օր 2015» կոնֆերանսն ավանդական կդառնա, քանի որ նման միջոցառումների ժամանակ ձեռներեցները կարող են ծանոթանալ մտավոր սեփականության օբյեկտների պահպանության գործընթացներին և ոլորտին, բրենդերի զարգացմանը կամ ապրանքանիշի բրենդավորման գործընթացին, ինչը թույլ կտա արտաքին շուկա դուրս գալ արդեն ձևավորված բրենդով։ –0–